

ԲՐՈՒՆՈ ԷՔԱՐՏ

«Իմ վկայությունները Ուրֆայի իրադարձությունների մասին»

Օրերս Հայաստանի ազգային գրադարանին նվիրաբերվեց Բրունո Էքարտի **«Իմ վկայությունները Ուրֆայի իրադարձությունների մասին»** գիրքը (50 օրինակ): Այն ներկայացվելու է գրքի միջազգային ցուցահանդեսներում, տրամադրվելու է արտասահմանյան տարբեր գրադարանների և տեղի մարզային գրադարաններին:

Հայոց Յեղասպանության թեմային անդրադարձել են բազմաթիվ հեղինակներ, հրատարակվել են տարբեր գրքեր, հուշագրություններ և վկայություններ: 2018թ. Երևանի «Նահապետ» հրատարակչությունը հրատարակել է Ուրֆա քաղաքի գերմանական առաքելությունում ծառայած և Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին տեղի գորգագործական ֆաբրիկայի դիզայներական աշխատանքը ղեկավարած Բրունո Էքարտի հուշերի գիրքը՝ «Իմ վկայությունները Ուրֆայի իրադարձությունների մասին»: Այն 1915թ.-ին Ուրֆայի հայության հետ տեղի ունեցած ճեղասպանության մասին պատմող հուշագրություն է:

*Գիրքը, որ կազմել է Էքարտի ժառանգը՝ **Արմենուհի Լևոնյանը**, թարգմանվել է 4 լեզուներով (ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն):*

Հուշագրության հեղինակը հաղորդում է փաստեր և մեկնաբանում դրանք մարդասիրական տեսանկյունից: Բրունո Էքարտը սովորական մարդ էր, բայց միննույն ժամանակ ականավոր մարդասեր, որն անհավատալի ջանքեր է գործադրել Ուրֆայում բնակվող և Թուրքիայի մեծաթիվ այլ շրջաններից այդ քաղաք տեղահանված հայերին փրկելու համար: Հուշերը միաժամանակ հաղորդում են փաստեր Ուրֆայում կազմակերպված հայերի ինքնապաշտպանության մասին:

Գրքի ներածական հատվածում ընթերցողները կարող են ծանոթանալ Բրունո Էքարտի և նրա ավագ եղբոր՝ Ֆրանց Էքարտի գործունեությանը: Ուրֆայում նրանց միսիոներական գործունեությունը առանձնահատուկ դեր խաղաց հայ ժողովրդի համար այդքան ծանր ժամանակահատվածում: